ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ԲՄԾՁԲ-7/5-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 01.06 . 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Եղիազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 06.04.2018թ. կնքված № ԲՄԾՁԲ-7/5-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը և այն փաստը, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված դերձակի ծառայություն / կոստյում՝ բամբակյա, կեպիով/ ծառայության միավորի գինը նվազեցնել 3900 ՀՀ դրամի, իսկ դերձակի ծառայություն /կոստյում՝ ձմեռային դաշտային/ ծառայության միավորի գինը նվազեցնել 14500 ՀՀ դրամի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատուցել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կողմից մատուցվող Ծառայության գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 138020000 (հարյուր երեսունութ միլիոն քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուի մատուցած Ծառայությունների դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիրն ուժի մեջ է կնքման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունի մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	Արարատի մարզ, ք. Մասիս, 1 փողոց
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 03804898
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Վ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	ԳՄԱ կոդը	Գնման առարկան	Չ/Մ	Միավորի գին	Քանակ	Գնման ժամանակացույց, ըստ 2020թ.		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 30.10.20
1	98391120/35	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ բամբակյա, կեպիով	լ-կ	**3900**	16800	5000	7500	4300
2	98391120/18	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ ձմեռային դաշտային	լ-կ	**14500**	5000		3500	1500

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, ոչ ուշ քան 10.12.2020
1	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ բամբակյա, կեպիով	19500000	19500000	48750000	48750000	48750000	65520000	65520000	65520000
3	դերձակի ծառայություններ / Կոստյում՝ ձմեռային դաշտային			50750000	50750000	50750000	72500000	72500000	72500000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՑՈՒԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ տնօրեն

Վ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ